ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

13 դեկտեմբերի 2017 թ., ԿԽ-007/17

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2018 թ. ուսուցման ծրագիրը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով՝ Խորհուրդը.

Որոշում է՝

1. Հաստատել «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2018թ. ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Նախագահող՝ ***Ա. Հարությունյան***

Խորհրդի անդամներ՝ ***Ա. Հովհաննիսյան***

Գ. Բաղդասարյան

Ռ. Ասլանյան

Հավելված
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2017 թվականի
դեկտեմբերի 13-ի թիվ ԿԽ-007/17 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է 2018թ. դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիրներ) կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդիրների մոտ դատախազի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը հետևյալ ոլորտներում.

ա) Ընդհանուր և հարակից մասնագիտական ոլորտ: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է սահմանադրական իրավունքին, մարդու իրավունքների եվրոպական իրավունքին, ինչպես նաև կիրառական իրավաբանությանը: Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է սահմանադրական իրավունքի և արդարադատության, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) իրավաբանության, հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի և դատախազի մասնագիտական էթիկայի, փաստարկման և հռետորաբանության, համակարգչային հմտությունների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ դատական ակտերի ընկալման և կիրառման, իրավական վերլուծությունների կատարման, իրավավերլուծական տեքստերի շարադրման, իրավաչափ վարքագծի ընտրության կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

բ) Հատուկ մասնագիտական ոլորտ: Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է քրեական իրավունքում, քրեական դատավարությունում առկա արդի հիմնահարցերին, մինչդատական վարույթում դատախազական գործառույթների իրացման, դատարանում մեղադրանքի պաշտպանության հմտություններին, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության, պրոբացիայի նկատմամբ դատախազական հսկողության, կիբերհանցագործության դեմ պայքարի հարցերին, կոռուպցիոն հանցագործությունների որակման և քննության մեթոդիկային, խոցելի անձանց մասնակցությամբ վարույթի, քրեական գործերով քննության մեթոդիկայի առանձնահատկություններին, խոշտանգումների դեմ պայքարի, փորձաքննությունների նշանակման և դրանց արդյունքների գնահատման, պետական շահերի պաշտպանության արդի հարցերին:

Ուսումնական գործընթացը նպատակաուղղված է քրեական դատավարության տարբեր փուլերում ծագող հարցերի, քրեական իրավունքի, ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական դա-

տարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերում և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններում արտահայտված իրավական դիրքորոշումների, ինչպես նաև պետական շահերի պաշտպանության և արդի այլ հիմնահարցերի վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման և փորձաշրջանի եղանակներով:

5. Լսարանային ուսուցումն իրականացվում է ընդհանուր և հարակից, հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլների հիման վրա՝ դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների, ինչպես նաև ունկնդիրների ինքնակրթությունը խրախուսող կրթական արդի եղանակների կիրառման միջոցով:

6. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ՝ ըստ Ծրագրով նախատեսված ուղղությունների: Փորձաշրջանի մեկ օրվա տևողությունը 10 ակադեմիական ժամ է: Փորձաշրջանի ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 720 ակադեմիական ժամ: Փորձաշրջանի ավարտին Ունկնդիրը գնահատվում է՝ դրական կամ բացասական:

7. Ուսումնառության ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 1050 ակադեմիական ժամ:

8. Ուսումնառության տևողությունը սահմանվում է 7 ամիս 2 շաբաթ (2018 թվականի փետրվարի 26-ից հոկտեմբերի 12-ը)՝ ներառյալ 4 ամիս տևողությամբ փորձաշրջանը (2018 թվականի հունիսի 11-ից հոկտեմբերի 12-ը):

II. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

	Դասընթացների ժ/ք	**Քննաշրջանի ժ/ք**	**Փորձաշրջանի ժ/ք**	**Ընդհանուր ժ/ք**
Ուսուցման 1-ին հատված (փետրվար 26 - ապրիլ 13)	**110 ժամ** (6 դասընթաց) (փետրվար 26 - մարտ 30)	**10 ժամ** (5 քննություն) (ապրիլ 2 - ապրիլ 13)	—	**120 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (ապրիլ 16 - հունիս 1)	**100 ժամ** (5 դասընթաց) (ապրիլ 16 - մայիս 18)	**8 ժամ** (5 քննություն) (մայիս 21 - հունիս 1)	—	**108 ժամ**
Ուսուցման 3-րդ հատված (հունիս 4 - հուլիս 20)	**90 ժամ** (7 դասընթաց) (հունիս 4 - հուլիս 6)	**12 ժամ** (5 քննություն) (հուլիս 9 - հուլիս 20)	**120 ժամ** (հունիս 11 - հուլիս 20)	**222 ժամ**
Ուսուցման 4-րդ հատված (հուլիս 23 - հոկտեմբեր 12)	—	—	**600 ժամ** (հուլիս 23 - հոկտեմբեր 12)	**600 ժամ**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**300 ժամ**	**30 ժամ**	**720 ժամ**	**1050 ժամ**

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	PC-J-002-18	ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները	10
2.	PC-J-003-18	ՄԻԵԴ իրավաբանության հիմունքները և արդի միտումները	10
3.	PC-J-004-18	Իրավաբանական գիր և մեկնաբանություն	10
4.	PC-J-014-18	Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և դատախազի մասնագիտական էթիկա	10
5.	PC-G-004-18	Փաստարկում և հռետորաբանություն	20
6.	PC-G-028-18	Համակարգչային հմտություններ	10

2. Հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
7.	PC-Q-002-18	ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր	40
8.	PC-Q-003-18	ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր	40
9.	PC-Q-015-18	Մինչդատական վարույթում դատախազական գործառույթների իրացման հմտություններ	20
10.	PC-Q-016-18	Դատարանում մեղադրանքի պաշտպանության հմտություններ	20
11.	PC-Q-019-18	Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության, պրոբացիայի նկատմամբ դատախազական հսկողության հիմնախնդիրներ	10
12.	PC-Q-030-18	Կիբերհանցագործությունների դեմ պայքարի արդի հարցեր	10
13.	PC-Q-039-18	Կոռուպցիոն հանցագործությունների որակումը և քննության մեթոդիկան	20
14.	PC-Q-045-18	Խոցելի անձանց մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները	10
15.	PC-Q-047-18	Քրեական գործերով քննության մեթոդիկայի արդի հարցեր	20
16.	PC-Q-056-18	Խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման արդի հարցեր	10
17.	PC-J-009-18	Փորձաքննությունների նշանակման և դրանց արդյունքների գնահատման արդի հարցեր	20
18.	PC-J-013-18	Պետական շահերի պաշտպանության արդի հարցեր	10

IV. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. PC-J-002-18. ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները

Դասընթացը պայմանավորված է սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության ոլորտում Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- սահմանադրական իրավունքի գիտության առարկան, մեթոդները, սահմանադրական իրավունքի գիտության զարգացման արդի միտումները,
- Հայաստանի Հանրապետության դատական իշխանության սահմանադրական հիմունքների (դատական իշխանության մարմինների համակարգի կազմակերպման և գործունեության կարգի) վերաբերյալ հարցերը,
- դատախազության սահմանադրական կարգավիճակի վերաբերյալ հարցերը,
- սահմանադրական արդարադատության (սահմանադրական դատարանի իրավական կարգավիճակի, կազմակերպման և գործունեության կարգի, սահմանադրական դատարանի լիազորությունների) վերաբերյալ հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ PC-J-003-18 դասընթացի հետ համատեղ:

2. PC-J-003-18. ՄԻԵԴ իրավաբանության հիմունքները և արդի միտումները

Դասընթացը պայմանավորված է ՄԻԵԴ գործունեության վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է ՄԻԵԴ-ի և ազգային դատարանների միջև երկխոսությունը, ցույց է տալիս ֆունդամենտալ իրավունքների՝ անձնական կյանքի հարգման, անձնական ազատության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, խոշտանգումների արգելքի կապը արդար դատաքննության իրավունքի հետ՝ ապացույցների ձեռք բերման, գնահատման և կիրառության լույսի ներքո: Այդ իմաստով մանրամասնորեն ներկայացվում է, թե արդար դատաքննության ընդհանուր իրավունքի վրա ինչ ազդեցություն կարող է թողնել ապացույցների ձեռք բերումը այնպիսի գործողություններ կատարելու ընթացքում, ինչպիսիք են, օրինակ, բերման ենթարկելը, ձերբակալումը, կալանավորումը, բնակարանի խուզարկությունը, օպերատիվ հետախուզական միջոցառումները, անձից նմուշներ վերցնելը, առերեսումը, հակընդդեմ հարցման գործողությունը, պաշտպանի ներգրավումը և այլ դատավարական ու քննչական գործողությունները, որոնք իրականացվում են վերը նշված ֆունդամենտալ իրավունքների միջամտությամբ:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ PC-J-002-18 դասընթացի հետ համատեղ:

3. PC-J-004-18. Իրավաբանական գիր և մեկնաբանություն

Դասընթացը պայմանավորված է համոզիչ և որակյալ իրավական վերլուծությունների շարադրման ոլորտում կարողությունների ու հմտությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝
- IRAC համակարգով իրավական վերլուծությունների կատարման և շարադրման հետ կապված հարցերը,
- իրավական ակտերի իրավամեկնաբանողական հնարքների կիրառման հետ կապված հարցերը,
- իրավական վերլուծությունների լեզվական որակների ապահովման հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ PC-G-028-18 դասընթացի հետ համատեղ:

4. PC-J-014-18. Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և դատախազի մասնագիտական էթիկա

Դասընթացը պայմանավորված է հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում գիտելիքների ծավալի ընդլայնման, դատախազի մասնագիտական էթիկայի կանոնների հետ կապված գիտելիքներ հաղորդելու և դրանք կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի հիմնահարցերը,
- հակակոռուպցիոն պայքարի իրավական կարգավորումները (ներպետական և միջազգային, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Եվրախորհրդի Փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄՈՆԻՎԱԼ) հանձնարարականները),
- կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակների (ներպետական և միջազգային, այդ թվում՝ ԳՐԵԿՈ-ի և ՄՈՆԻՎԱԼ-ի գործունեությունը), համապատասխան այլ շահագրգիռ կողմերի (հասարակական կազմակերպությունների, ԶԼՄ-ների) մասնակցության և պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը,
- դատախազական գործունեություն իրականացնելիս և ալ գործունեության ընթացքում դատախազի վարքագծի կանոնների, դատախազների էթիկայի հարցերով վարույթի հետ կապված հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

5. PC-G-004-18. Փաստարկում և հռետորաբանություն

Դասընթացը պայմանավորված է Ունկնդիրներին ապացուցման, հերքման, հիմնավորման, զրուցակիցների մեջ համոզմունքի ձևավորման, բանավոր խոսքի արտահայտչականության, բանավեճի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- փաստարկման գործընթացի բաղադրիչները, եղանակները և առավել հաճախ հանդիպող սխալները,
- փաստարկման համակարգին ներկայացվող պահանջները,
- մեղադրական ճառի կառուցվածքը, բաղադրիչները և դրան ներկայացվող պահանջները,
- ավանդական և ժամանակակից հռետորաբանության զինանոցը,
- բանավեճի ընթացքում կիրառվող կառուցողական և ապակառուցողական տեխնոլոգիաներն ու վերջիններիս չեզոքացման մեթոդաբանական սկզբունքները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

6. PC-G-028 -18. Համակարգչային հմտություններ

Դասընթացը պայմանավորված է Ունկնդիրներին համակարգչային ծրագրերով աշխատելու, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և իրավական տեղեկատվական որոնման համակարգերից օգտվելու գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև այդ գիտելիքների ընդլայնման շարունակական զարգացման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է «Microsoft Office Word» և «Microsoft Office Excel» ծրագրերից առավել արդյունավետ օգտվելու առանձնահատկությունները, էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգով աշխատելու (մասնավորապես՝ պետական մարմիններում փաստաթղթերի հոսքի արդյունավետ կառավարման, փաստաթղթերի և կից նյութերի էլեկտրոնային տարբերակների կենտրոնացված պահպանման, փաստաթղթաշրջանառության պատմության գրանցման ու փաստաթղթերի շարժի վերահսկման), իրավական-տեղեկատվական-որոնողական՝ «http://www.arlis.am/», «http://datalex.am/», «https://www.e-draft.am/», «https://hudoc.echr.coe.int/» համացանցային ռեսուրսներից օգտվելու հմտությունները, ինչպես նաև «Սահմանային Էլեկտրոնային Կառավարման Տեղեկատվական (ՍԵԿՏ)» համակարգի հնարավորությունները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ PC-J-004-18 դասընթացի հետ համատեղ:

7. PC-Q-002-18. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է քրեական իրավունքի ոլորտում իրականացված և իրականացվող բարեփոխումների, վիճահարույց հարցերի շուրջ ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերում և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններում արտահայտված իրավական դիրքորոշումների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քրեական իրավունքի ընդհանուր մասի ինստիտուտները, այդ թվում՝ պատժողական քաղաքականության զարգացման միտումները և հեռանկարները,
- ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցավոր արարքների (մասնավորապես՝ մարդու կյանքի և առողջության, սեռական ազատության և անձեռնմխելիության, ընտանիքի և երեխայի շահերի, սեփականության, տնտեսական գործունեության (այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը (փողերի լվացումը)), հասարակական անվտանգության, հասարակական կարգի և բնակչության առողջության, մասնավորապես՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, շրջակա միջավայրի անվտանգության, ինչպես նաև պետական իշխանության, պետական ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների և այլն) ճշգրիտ որակման հիմնահարցերը և դրանց լուծման ոլորտում օրենսդրական ու իրավակիրառ փորձը,
- քրեական իրավունքի ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները, ՀՀ նկատմամբ դրա կիրառման հարցերը,
- ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների բովանդակությունը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքները, դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը),
- քրեական նոր օրենսգրքի նախագծի հիմնադրույթները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

8. PC-Q-003-18. ՀՀ քրեական դատավարության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է քրեական դատավարության և օպերատիվ հետախուզական գործունեության ոլորտում նոր իրավական զարգացումների, ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերի, վիճահարույց հարցերի շուրջ ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերում և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններում արտահայտված իրավական դիրքորոշումների, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում սահմանված իրավակարգավորումների էության և տրամաբանության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու, ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է ՀՀ քրեական դատավարության առանձին ինստիտուտները, դրանց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և դրանց կիրառման հիմնախնդիրները: Մասնավորապես՝

- ապացույցները և ապացուցման գործընթացը քրեական դատավարությունում,
- քրեական դատավարության ոլորտում ՄԻԵԿ-ով երաշխավորված իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքների ապահովման հիմնախնդիրները, դրանց վերաբերյալ ՄԻԵԴ իրավական դիրքորոշումները և ՀՀ-ում դրանց կիրառման հիմնահարցերը,
- քրեական դատավարությունում օպերատիվ-հետախուզական գործունեության և դրա նկատմամբ դատախազական հսկողության, ՕՀԳ արդյունքները քրեական դատավարությունում օգտագործելու հիմնախնդիրները, ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերի կիրառման գործնական հարցերը (այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պայմանագրերի և դրանց կիրառման առանձնահատկությունների, ինչպես նաև «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում ամրագրված իրավունքների, ինչպես նաև դրանց ներպետական օրենսդրությունում կիրառելիության և Կամընտիր արձանագրությամբ հասանելի դարձած ընթացակարգերի հարցերը),
- հետախուզում հայտարարելու և հետախուզման մեջ գտնվող անձանց հայտնաբերման հիմնախնդիրները,
- քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հիմնադրույթները, առաջարկվող նոր ինստիտուտները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

9. PC-Q-015-18. Մինչդատական վարույթում դատախազական գործառույթների իրացման հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է մինչդատական վարույթի ընթացքում դատախազական գործառույթների վերաբերյալ գիտելիքների շրջանակն ընդլայնելու, ինչպես նաև այդ ոլորտում համապատասխան կարողություններ և հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- դատախազի լիազորությունները մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն և դատավարական ղեկավարում իրականացնելիս,
- կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և հաշվառման մասին օրենսդրության պահանջ-

ների կատարման նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության առանձնահատկությունները,

- քրեական գործի հարուցման փուլում օրինականության նկատմամբ դատախազական հսկողության առանձնահատկությունները,
- մինչդատական վարույթի ընթացքում հարկադրանքի միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության առանձնահատկությունները,
- դատախազական հսկողությունն անձին որպես մեղադրյալ ներգրավելու օրինականության նկատմամբ,
- դատախազական հսկողությունը մինչդատական վարույթում կասկածյալի, մեղադրյալի, տուժողի և դատավարության այլ մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նկատմամբ,
- դատախազական հսկողության ու դատավարական ղեկավարման և քննիչի դատավարական ինքնուրույնության հարաբերակցությունը, գործնական հիմնախնդիրները,
- մինչդատական վարույթի ընթացքում հետաքննության և նախաքննության մարմինների կողմից կայացված որոշումների օրինականության ստուգման հիմնախնդիրները,
- նախաքննության արդյունավետության ապահովման դատախազական ներգործության միջոցները,
- դատախազական հսկողությունը քրեական գործով վարույթը կասեցնելու և կարճելու մասին որոշումների օրինականության նկատմամբ,
- դատախազի որոշումները մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական գործով (գործնական հիմնախնդիրները),
- օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության առանձնահատկությունները,
- մինչդատական վարույթի ընթացքում քաղաքացիների դիմումների, բողոքների ընդունման, քննարկման և լուծման հիմնախնդիրները,
- մինչդատական վարույթի ընթացքում կայացվող դատախազական ակտերին ներկայացվող կառուցվածքային և բովանդակային պահանջները (գործնական հիմնախնդիրները),
- դատական վերահսկողության ոլորտում դատախազական գործառույթների իրականացման առանձնահատկություններն ու հիմնախնդիրները,
- մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության առանձնահատկություններին և հիմնախնդիրներին վերաբերող՝ ՀՀ գլխավոր դատախազի հրամաններում և ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներում արտահայտված դիրքորոշումներն ու ներկայացված պահանջները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

10. PC-Q-016-18. Դատարանում մեղադրանքի պաշտպանության հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է դատական վարույթի ընթացքում դատախազական գործառույթների վերաբերյալ գիտելիքների շրջանակն ընդլայնելու, ինչպես նաև այդ ոլորտում համապատասխան կարողություններ և հմտություններ ձևավորելու համար:

Դասընթացը ներառում է՝

- մեղադրանքի պաշտպանության նախապատրաստությունը, նախնական դատական վարույթին, դատաքննությանը, ապացույցների հետազոտմանը, դատական գործողություններին մեղադրողի մասնակցության առանձնահատկությունները և գործնական հիմնախնդիրները,
- առանձին տեսակի հանցագործությունների վերաբերյալ գործերով դատարանում մեղադրանքի պաշտպանության առանձնահատկությունները,
- մեղադրանքի պաշտպանության տակտիկական առանձնահատկությունները,
- քրեական դատավարությանը մասնակցող անձի նկատմամբ ձեռնարկված պաշտպանության միջոցների իրականացման առանձնահատկությունները դատաքննության ընթացքում,
- արագացված դատական քննության կիրառման դեպքում մեղադրանքի պաշտպանության, դատական վերանայման վարույթներին դատախազի մասնակցության առանձնահատկությունները:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

11. PC-Q-019-18. Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության, պրոբացիայի նկատմամբ դատախազական հսկողության հիմնախնդիրներ

Դասընթացը պայմանավորված է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կատարման ոլորտում դատախազական գործառույթների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կատարման նկատմամբ դատախազական հսկողության, քրեակատարողական ոլորտի վերաբերյալ հարցերը՝ ՀՀ օրենսդրության, ՀՀ-ի կողմից վավերացված միջազգային պայմանագրերի, ՄԻԵԴ, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի ակտերում և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններում արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում, ինչպես նաև պրոբացիայի ինստիտուտը: Մասնավորապես՝

- դատախազի՝ ազատությունից զրկված անձանց պահելու վայրեր այցելելու նպատակներն ու կարգը,
- ազատությունից զրկված կամ ազատությունը սահմանափակված անձանց հիմնական իրավունքներին վերաբերող իրավական ակտերի օրինականության ստուգումը և անօրինական ակտերի նկատմամբ դատախազական ներգործության միջոցները,
- պատժի ենթարկված անձանց հարցման ենթարկելու, տեղեկատվություն ստանալու և բացատրություններ վերցնելու հիմքերը և կարգը,
- ապօրինի պահվող անձանց ազատ արձակելու հիմքերը և կարգը,
- պրոբացիոն ծառայության հիմնախնդիրները և դատախազական հսկողության առանձնահատկությունները,
- պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու օրենսդրական կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

12. PC-Q-030-18. Կիբերհանցագործությունների դեմ պայքարի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է «Կիբերհանցագործությունների մասին» ԵԽ Կոնվենցիայի կիրառման, նշված բնույթի հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- «Կիբերհանցագործությունների մասին» ԵԽ Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ նորմերի իմպլեմենտացման խնդիրները ՀՀ քր. օր.-ում և նշված Կոնվենցիայի հիման վրա ստեղծված կոմիտեի (T-CY)՝ արարքների որակման հետ կապված բանաձևերը,
- ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքների (այդ թվում՝ սոցիալական ցանցերում, բանկային քարտերից կատարվող հանցագործություններ) բացահայտման և որակման հիմնախնդիրները,
- էլեկտրոնային ապացույցների հետ աշխատելու քրեադատավարական առանձնահատկությունները,
- մանկական պոռնկագրական նյութերի հետ կապված քրեական գործերով ապացույցների ձեռքբերման հնարավոր տարբերակները,
- «տոր» կամ «մութ» ցանցերից ապացույցներ ձեռքբերելու դժվարությունները, նման հանցագործությունների լատենտայնությունը,
- կիբերհանցագործություններով միջազգային փոխօգնության հիմնախնդիրները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

13. PC-Q-039-18. Կոռուպցիոն հանցագործությունների որակումը և քննության մեթոդիկան

Դասընթացը պայմանավորված է կոռուպցիոն հանցագործությունների առանձին տեսակների որակման և քննության մեթոդիկայի, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ գիտելիքների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- հակակոռուպցիոն պայքարի միջազգային իրավական կարգավորումները, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Եվրախորհրդի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄՈՆԻՎԱԼ) հանձնարարականները), վերջիններիս անդամակցող պետությունների կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը,
- հակակոռուպցիոն պայքարի ներպետական իրավական կարգավորումները, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 311-րդ, 312-րդ, 314-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի և կոռուպցիոն այլ հանցագործությունների քրեաիրավական բնութագրերը, որակման առանձնահատկությունները, ինչպես նաև դատական պրակտիկայում առկա իրավական դիրքորոշումները, կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

14. PC-Q-045-18. Խոցելի անձանց մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները

Դասընթացը պայմանավորված է խոցելի անձանց (անչափահասների, բռնության ենթարկված կանանց, հաշմանդամների և այլն) մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է խոցելի անձանց նկատմամբ (կասկածյալ, մեղադրյալ) և նրանց մասնակցությամբ (վկա, տուժող) իրականացվող մինչդատական և դատական վարույթների անցկացման առանձնահատկությունների վերաբերյալ հիմնահարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ PC-Q-056-18 դասընթացի հետ համատեղ:

15. PC-Q-047-18. Քրեական գործերով քննության մեթոդիկայի արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է կրիմինալիստիկական մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու և դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելու անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է մարդու կյանքի, առողջության, սեռական ազատության և անձեռնմխելիության, սեփականության, տնտեսական գործունեության (այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու /փողերի լվացման/), հասարակական անվտանգության (մասնավորապես՝ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտումների հետ կապված հանցավոր արարքների), հասարակական կարգի և բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկային վերաբերող հարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

16. PC-Q-056-18. Խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման օրենսդրական պահանջների, միջազգային չափանիշների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է խոշտանգումների արգելքի, դրա կանխարգելման, արձանագրման և արդյունավետ բացահայտման, Ստամբուլի արձանագրության չափանիշներին համապատասխան խոշտանգումների ու վատ վերաբերմունքի հետքերի փաստագրման վերաբերյալ հարցերը, ՄԻԵԿ կոնվենցիայի 3-րդ հոդվածը, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումները, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի դրսևորման դեպքերով արարքի որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով՝ PC-Q-045-18 դասընթացի հետ համատեղ:

17. PC-J-009-18. Փորձաքննությունների նշանակման և դրանց արդյունքների գնահատման արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման, համարժեք և արդյունավետ փորձաքննությունների նշանակման կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քրեական, վարչական և քաղաքացիական վարույթներում փորձաքննությունների նշանակման հիմքերի, կարգի, բովանդակության, կատարման և արդյունքների գնահատման վերաբերյալ հիմնահարցերը (այդ թվում՝ դատաձգաբանական, դատաբժշկական, դատահոգեբանական, դատաքիմիական, դատաձեռագրաբանական, համակարգչատեխնիկական, ճարտարագիտատեխնիկական, տնտեսական գործունեության դեմ ուղղված առանձին տեսակի հանցագործություններով նշանակվող փորձաքննություններ),
- առանձին կատեգորիայի սուբյեկտների վերաբերյալ նշանակվող դատահոգեբանական և դատահոգեբուժական փորձաքննությունների նշանակման առանձնահատկությունները,
- փորձաքննությունների արդյունքների գնահատման հիմնահարցերը:

Գնահատումն իրականացվում է գրավոր եղանակով:

18. PC-J-013-18. Պետական շահերի պաշտպանության արդի հարցեր

Դասընթացն անհրաժեշտ է պետական շահերի պաշտպանության հարցերով քաղաքացիական և վարչական դատավարության տարբեր փուլերում ծագող հիմնահարցերի վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է՝

- պետական շահերի պաշտպանության ոլորտները (հողային, հարկային, մաքսային, սոցիալական, շինարարական և այլն) և դրանց վերաբերյալ օրենսդրական կարգավորումները,
- քաղաքացիական և վարչական դատավարությունում դատախազի մասնակցության հիմքերը և առանձնահատկությունները,
- իրավական որոշակիության և հայցային վաղեմության ժամկետների առանձնահատկությունները քաղաքացիական իրավահարաբերություններում,
- վարչարարության և վարչական վարույթի, ստուգումների կազմակերպման և անցկացման կարգի առանձնահատկությունները,
- հատուկ վարույթի գործերի քննության ընթացքում ծագող հարցերը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով:

Նախագահող՝ *Ա.Հարությունյան*